

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/9

24 մարտի 2017թ.

Քննարկվեց «Մաքստրոնիկ» ՓԲԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ 26.12.2016թ. թիվ 5013102 ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 25.08.2016թ. N1011146 հանձնարարագրի համաձայն «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ 26.12.2016թ. թիվ 5013102 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ):

Ակտի 3-րդ և 21-րդ կետերով լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել, համապատասխանաբար՝ ավելացված արժեքի հարկի և ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով: Մասնավորապես, ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 990.872 դրամ, իսկ ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով՝ 5.765.762 դրամ:

Հանձնաժողովը, քննության առնելով Ակտի 3-րդ և 21-րդ կետերով, համապատասխանաբար՝ ավելացված արժեքի հարկի և ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով արձանագրված խախտումները, ինչպես նաև դրանք կատարելու համար կիրառված պատասխանատվության միջոցները, եկավ եզրակացության, որ Ակտի նշված կետերով խախտումներն արձանագրվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Միևնույն ժամանակ, գանգատի քննության ընթացքում ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ում իրականացված ստուգման ժամկետի ընդհանուր տևողությունը գերազանցել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ժամկետները: Մասնավորապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 25.08.2016թ. N1011146 հանձնարարագրում, ինչպես նաև դրան հաջորդած ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ստուգման ժամկետը երկարաձգելու (կասեցնելու) վերաբերյալ հրամաններում ստուգման ժամկետի վերաբերյալ արտացոլված տվյալների ուսումնասիրության արդյունքում ընկերությունը եկել է եզրակացության, որ ստուգումն իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ:

Բարձրացված հարցի իսկությունը պարզելու նպատակով ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց հանձնարարվել է ուսումնասիրել բերված փաստարկները և Հանձնաժողովին ներկայացնել համապատասխան տեղեկատվություն: Ստուգմանն առնչվող ապացույցների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ում ստուգումն իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ:

Տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ չնայած նրան, որ Ակտով խախտումներն արձանագրվել են ՀՀ օրենսդրության պահանջներին

համապատասխան, սակայն միևնույն ժամանակ առկա է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստ, ինչը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով հիմք է, Ակտն անվավեր ճանաչելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի ը) կետի, ինչպես նաև նույն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ Ակտով՝ ավելացված արժեքի հարկի և ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով արձանագրված խախտումները ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով կրկին անգամ արձանագրելու նպատակով անհրաժեշտ է միջնորդություն ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին՝ «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում կատարելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

1. Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ 26.12.2016թ. թիվ 5013102 ակտը:

2. Միջնորդություն ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին՝ «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում կատարելու համար:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ